ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

«ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-16/3» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ Քննչական կոմիտեի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 18.10.2016թ. ժամը 11^{00}-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի անդամներ Վ. Պետրոսյանը (նիստի նախագահող), Վ. Հարությունյանը, Ս.Թումասյանը, Ե.Հովհաննիսյանը, և քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

« ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-16/3» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 110)**
2. **«Միկրորինգ» ՍՊԸ (ք. Երևան, Նոր Նորքի 9-րդ զնգ., 13շ., բն. 14)**
3. **«Արմքոմփվիններ» ՍՊԸ (ք. ք. Երևան, Ադոնցի փ. 1 շ., բն. 7)**
4. **«Տիգրան Մեծ հրատարակչություն» ՓԲԸ (ք. Երևան, Արշակունյաց 2)**

Բ) հայտ չեն ներկայացրել համակարգում 18.10.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ **«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ –ի հայտի. «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ** կողմից ներկայացված **Հավելված 1-ում՝** ընթացակարգին մասնակցելու դիմումի 3-րդ կետում ապրանքների արտադրության երկրի մասին տվյալները նշված չեն ըստ

առանձին չափաբաժինների(անհրաժեշտ է կոնկրետացնել), և **Հավելված 4.2-ի՝** ԵՏՄ անդամ երկրների արտադրության ապրանք մատակարարելու վերաբերյալ հայտարարությունում նշված չէ թե, որ չափաբաժիններն են հանդիսանում ԵՏՄ անդամ երկրների արտադրության ապրանքներ: (Եթե ապրանքը չի հանդիսանում ԵՏՄ անդամ երկրների արտադրության, անհրաժեշտ է նշել այդ տեղեկությունը):

Հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՀՀ կառավարության 10.02.11 թվականի 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի՝ գնահատման գործընթացը կասեցնել մեկ աշխատանքային օրով: Հաջորդ նիստը հրավիրել **19.10.2016թ.** ժամը 16:00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Պետրոսյան (նիստի նախագահող)

_____ Վ. Հարությունյան

_____ Ս.Թումասյան

_____ Ե.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

«ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-16/3» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ Քննչական կոմիտեի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 19.10.2016թ. ժամը 16^{00}-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի անդամներ Վ. Պետրոսյանը (նիստի նախագահող), Վ. Հարությունյանը, Ս.Թումասյանը, Ե.Հովհաննիսյանը, և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ.

1.1 **«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ն** սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերի պահանջներին:

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Քանակ	Նախահաշվային գին/ՀՀ դրամ/	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/			
				«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ	**«Արմքոմփ վիններ» ՍՊԸ**	**«Տիգրան Մեծ հրատարակչություն» ՓԲԸ**	**«Միկրորին» ՍՊԸ**
1	թուղթ կտրող սարք	3	105000	85000	87500		
2	դակիչ (ծակոտիչ)՝ միջին	50	300000	250000	104167		
3	սոսնձամատիտ, գրասենյակային	1000	140000	116667	233333		
4	տետրեր	200	7000	5833	16667		
5	մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ	1000	25000	20000	31667		
6	դանակ գրասենյակային մետաղյա	98	34300	26133	9800		
7	մկրատ, գրասենյակային	100	42000	32917	25000		
8	սեղմակ, փոքր	200	21600	35833	53333		
9	սեղմակ, միջին	150	45000	67500	75000		
10	սեղմակ, մեծ	80	60000	48000	66667		
11	գրիչ գնդիկավոր	5000	400000	291667	141667		
12	թուղթ, A4 ֆորմատի1 /21x29.7/	2885	4039000	4255375	4808333	3591825	
13	դատարկ սկավառակ,	50000	3700000	3166667	3541667		

	առանց տուփի, CD						
14	մարկերներ	1000	120000	104167	100000		
15	ուղղիչ հեղուկներ	1000	170000	158333	116667		
16	ֆլեշ հիշողություն, 8GB	410	738000	871250	574000		602700
17	թուղթ նշումների համար, սոսնձվածքով	2000	240000	208333	233333		

Կազմակերպությունները չեն ներկայացրել հայտարարություն Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ:

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը արձանագրեց, որ

1. Ընթացակարգի 8-րդ, 9-րդ չափաբաժինների համար մասնակիցների, 12-րդ չափաբաժնի համար **«Արմքոմփվիններ» ՍՊԸ-ի** ներկայացված գնային առաջարկների ինքնարժեքները գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: 12-րդ չափաբաժնի համար **«Տիգրան Մեծ հրատարակչություն» ՓԲԸ-ի և «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ի** ներկայացված գնային առաջարկների ինքնարժեքի և ԱԱՀ-ի հանրագումարը գերազանցում է գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

2. Ընթացակարգի 13 և 17 չափաբաժինների համար **«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ի** ներկայացված գնային առաջարկը, **«Արմքոմփվիններ» ՍՊԸ-ի** ներկայացված գնային առաջարկների ինքնարժեքի և ԱԱՀ-ի հանրագումարը գերազանցում է գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը և ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը՝ ընթացակարգի 13 և 17 չափաբաժինների համար գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին կարող է մասնակցել միայն **«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ն:**

Հանձնաժողովը որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը՝ հաջորդ նիստը հրավիրել **2016թ. հոկտեմբերի 24-ին, ժամը 11:00-ին,** ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում, 621 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ **4**, դեմ՝ 0:

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Պետրոսյան (նիստի նախագահող)

_____ Վ. Հարությունյան

_____ Ս.Թումասյան

_____ Ե.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

«ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-16/3» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ Քննչական կոմիտեի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 24.10.2016թ. ժամը 11^{00}-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի անդամներ Վ. Պետրոսյանը (նիստի նախագահող), Վ. Հարությունյանը, Ս.Թումասյանը, Ե.Հովհաննիսյանը, և քարտուղար Մ.Մուրադյանը և **«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ տնօրեն Տիգրան Ղարիբյանը**:

1. Միաժամանակյա բանակցությունների մասին

Բանակցությունների ընթացքում **«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ կողմից** 13-րդ չափաբաժնի համար ընդանուր գինը նվազեցվեց 100000 ՀՀ դրամով՝ կազմելով 3700000 ՀՀ դրամ (3083333 առանց ԱԱՀ), 17-րդ չափաբաժնի համար ընդանուր գինը նվազեցվեց 10000 ՀՀ դրամով՝ կազմելով 240000 ՀՀ դրամ (200000 առանց ԱԱՀ):

Հանձնաժողովը որոշեց.

1.1 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1, 3, 4, 5, 10, 13, 17 չափաբաժինների համար **«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ** -ին,
2, 6, 7, 11, 14, 15, 16 չափաբաժինների համար **«Արմքոմփվիններ» ՍՊԸ** –ին:

1.2 Ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

2, 6, 7, 11 չափաբաժինների համար **«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ** -ին,
1 չափաբաժնի համար **«Արմքոմփվիններ» ՍՊԸ** –ին,
16 չափաբաժնի համար **«Միկրորինգ» ՍՊԸ** –ին:

2. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 15.00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

3. Գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն ընթացակարգի 8, 9, 12 չափաբաժինները հայտարարել չկայացած:

4. Հաստատել ընթացակարգի 8, 9, 12 չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը(կցվում է):

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետերի՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ՖՆ,
2. Համաձայն Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Պետրոսյան (նիստի նախագահող)

_____ Վ. Հարությունյան

_____ Ս.Թումասյան

_____ Ե.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ տնօրեն Տիգրան Ղարիբյան _____